

«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ
վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Անգլերենի դասավանդման մեթոդները ավագ դպրոցում

Առարկա –անգլերեն

Դպրոց –Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Ուսուցիչ՝ Գայանե Կաղզվանցյան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----3

Գլուխ առաջին:Անգլերենի ուսուցման առանձնահատկությունները
ավագ դպրոցում -----5

Գլուխ երկրորդ :Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական սկզբունքները և
նպատակները-----9

Եզրակացություն-----16

Օգտագործված գրականության ցանկ-----18

Ներածություն

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Նոր մոտեցումները ավագ դպրոցում օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից: Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Մեծ տեղ է հատկացվում ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը: Այն իրականացվում է մենախոսությամբ, երկխոսությամբ, հարցազրույցի, դերախաղի, մտքերի փոխանակմամբ, շարադրանքի ներկայացմամբ, տեղեկատվության փոխանցմամբ, համագործակցային առաջադրանքներով և քննարկումներով: Այս բոլորը իրականացվում է անհատական, զրույցներով, խմբերով: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն:

Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող: Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք: Հողվածում դիտարկվում են ավագ դպրոցում արդի դասավանդման մեթոդների կիրառմամբ օտար լեզվի բառապաշարի և քերականական ժամանակաձևերի մատուցման արդյունավետ միջոցներն ու սկզբունքները, ինչպես նաև ներկայացվող մեթոդների բովանդակությունը, առանձնահատկությունները, դասավանդման քայլերի հաջորդականությունը, դասաժամի արդյունավետ օգտագործումը, նյութի ճիշտ

բաշխումը ժամանակի մեջ և այլ մեթոդական նրբությունները: Անդրադարձ է կատարվում նաև ուսուցման ոճերին, որոնք մեթոդի ընտրության հիմքում են: Դրանցով են պայմանավորված նաև դասավանդողի և սովորողի դերը, իրավունքներն ու պարտականությունները դասավանդման գործընթացում: Որոշ մեթոդներ միտված են զարգացնելու լեզվի ուսուցման բոլոր հմտությունները՝ լսել, խոսել, գրել, կարդալ, իսկ մյուսները շեշտը դնում են կոնկրետ հմտությունների վրա:

Մեթոդի ընտրության հարցում կարևոր է նաև հաշվի առնել, արդյոք դասընթացն անհատական է, թե՛ խմբակային, ինչ ունակություններ և գիտելիքների բազա ունի սովորողը և այլն: Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների:

Մեր նպատակն է ներկայացնել ավագ դպրոցում մեր օրերում արդի համարվող դասավանդման որոշ մեթոդներ և մեկնաբանել դրանց բովանդակությունը, նպատակահարմարությունը, առանձնահատկություններն ու նրբությունները:

Ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը պայմանավորված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից:

Արդյունավետ ուսուցման երկրորդ կարևոր պայմանը այն է, երբ աշակերտներն իրենք են ուսուցանում այլ աշակերտների: ավանդական դասարաններում աշակերտները սոսկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝ լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը, կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

Գլուխ առաջին: Անգլերենի ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցում

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել առանցքայնորեն նախկին մեթոդներից տարբեր մեթոդներ և մեխանիզմներ: Այդ մեթոդների մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում ուսուցման նորարարական(ինովացիոն) մեթոդները: Նորարարություն հասկացությունը թարգմանաբար անգլերենից նշանակում է <inter> -<փոխադարձ>, <act>-<գործել>: Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործընթացը կազմակերպելու հատուկ ուսուցման ձև է: Այն իր մեջ ներառում է հստակ և կանխատեսելի նպատակներ: Այդ նպատակներից մեկն էլ հարմարավետ կրթական միջավայր ստեղծելն է, որտեղ աշակերտը կարող է զգալ իր հաջողությունը, մտավոր հետևողականությունը, որն ինքն իրեն կազմում է արդյունավետ ուսուցման բաղադրիչ: Մանկավարժության մեջ առանձնանում են ուսուցման մի քանի մոդելներ՝

1. պասիվ , երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «օբյեկտ» (լսում և նայում է
2. ակտիվ – երբ սովորողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «սուբյեկտ» (ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ
3. ինտերակտիվ (նորարարական) – փոխազդեցություն:

Նորարարական մոդելների օգտագործումն ուսուցման գործընթացում ենթադրում է դերային խաղերի օգտագործում, ինչպես նաև առաջադրված խնդիրների համատեղ լուծում: Բացառվում է կրթական գործընթացին մասնակցող անդամների կամ որևէ գաղափարի գերիշխանությունը: Ներգործության օբյեկտից ուսանողը վերածվում է սուբյեկտի: Նա ինքն է ակտիվորեն մասնակցում կրթության գործընթացին, հետևելով իր անհատական ուղուն: Հետազոտությունները ցույց են տվել, որ, երբ Դուք ինչ-որ բան կարդում եք՝ Դուք հիշում եք 10%-ը, երբ Դուք ինչ-որ բան լսում եք՝ Դուք հիշում եք 20%-ը, երբ Դուք ինչ-որ բան տեսնում եք՝ Դուք հիշում եք 30%-ը ,երբ Դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք՝ Դուք հիշում եք 50%-ը, երբ Դուք ինչ-որ բան արել եք ինքնուրույն՝ Դուք հիշում եք 90%-ը:

Ուսուցումը լինում է օպտիմալ և արդյունավետ այն ժամանակ, երբ մարդիկ ունեն իրենց դրսևորելու, փոխադարձ համագործակցություն (ինտերակտիվ) ցուցաբերելու հնարավորություն: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ անհրաժեշտ է այնպիսի

իրավիճակներ ստեղծել, որ աշակերտները յուրօրինակ, նորարարական մոտեցումհարցին՝ խրախուսելով խնդիրների լուծմանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակություններ՝ ինչը հոգեբանության տեսանկյունից համարվում է արդյունավետ: Ստեղծել այնպիսի պայմաններ, որաշակերտները ինքնուրույն փնտրեն դասընթացի ընթացքում առաջադրվածխնդիրների լուծման ուղիները և մեթոդները (ընտրվում են առաջադրված մեթոդներից որևէ մեկը կամ առաջադրում են սեփական տարբերակը, հիմնավորելով լուծումները),

- աշակերտը հայտնվի գործունեության անսովոր պայմաններում,
- աշակերտը հայտնվի անծանոթ պայմաններում՝ նախկինում ձեռք բերված գիտելիքների ակտիվ վերարտադրություն:

Ուսուցման գործընթացը, որը հիմնված է ինտերակտիվ ուսուցման մեթոդների վրա, կազմակերպվում է այնպես, որ խնդրի լուծման բացահայտման գործընթացին մասնակցեն բոլոր աշակերտներն առանց բացառության: Համատեղ աշխատանքը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրն իր ինքնատիպ ներդրումն է ունենում:

Վերջինս նպաստում է նաև, որ աշխատանքի ընթացքում տեղի ունենա գիտելիքների ու գաղափարների փոխանակում: Կազմակերպվում է անհատական, զույգերով և խմբային աշխատանքներ: Ինտերակտիվ մեթոդները հիմնված են սովորողների փոխադարձ ակտիվ համագործակցության վրա, որի արդյունքների մասին պարտադիր ուսուցիչը պետք է տրամադրի հետադարձ կապ՝ գնահատելով խմբի ձեռքբերումները, ներկայացնի նրանց թերացումները և ուղղորդի այդ թերացումների ուղղումը:

Դիտարկենք, թե ինչպես կարելի է ինտերակտիվ մեթոդները կիրառել օտար լեզվի ուսուցման ընթացքում: «Ինտերակտիվ» բառը թարգմանաբար նշանակում է «համագործուն դաս կամ միջգործունեություն»: Ինտերակտիվ դասի օրինակ կարող է լինել դասարանական ակտիվ քննարկումը, բանավեճը, խաղը: Նմանօրինակ դասերը սովորողների մոտ ստեղծում են մոտիվացիա՝ ցանկություն առաջացնելով ընթերցելու, լսելու, հասկանալու և, ամենակարևորը՝ խոսելու համար: Բազմաթիվ լեզվական համագործուն ուսումնական խաղերը նպաստում են սովորողի բառապաշարի ընդլայնմանը, զարգացմանը, նորացմանը: Բանավեճային դասերը թույլ են տալիս սովորողներին ձերբազատվել բարդույթներից, փորձել անզլերեն ձևակերպել միտքը, կարծիքը, տեսակետը: Նման դասերի ընթացքում դասավանդողը հնարավորինս քիչ է

միջամտում, հանդես է գալիս որպես հնարավորինս քիչ է միջամտում, հանդես է գալիս որպես ուղղորդող: Ուղղումներ անում է միայն շատ կոպիտ լեզվական կամ քերականական վրիպումների դեպքում: Ուսուցման ինտերակտիվ մեթոդները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը: Ինտերակտիվ դասն այնպիսի դաս է, ուր ապահովվում է ուսուցիչ-սովորող սերտ համագործակցություն: Դասը պետք է այնպես կառուցված լինի, որ հնարավոր լինի ներգրավվել դասարանի բոլոր սովորողներին՝ յուրաքանչյուրին ըստ հնարավորությունների: Նման դասերը շատ հարմար և կիրառելի են դառնում այնպիսի դասարաններում, որտեղ սովորողների օտար լեզվի իմացությունը տարբեր մակարդակների է, այսպես կոչված՝ «խառը դասարաններում»: Օրինակ՝ ես վերջերս 5-րդ դասարանում արեցի ինտերակտիվ դաս՝ The three bears (երեք արջերը) թեմայով՝ դերային խաղի ձևով: Աշակերտներին տրվեց դերեր, առաջադրանքներ և որոշակի ժամանակ պատրաստվելու համար: Դասին մասնակցեցին բոլոր աշակերտները (ըստ իրենց լեզվի իմացության տարբեր մակարդակների): Հեքիաթը բեմադրվեց դասարանում: Աշակերտները անգլերենով ներկայացրին իրենց դերը, ըստ իրենց պատկերացումների: Ըստ ինձ կատարածս ինտերակտիվ դասը հաջողվեց, քանի որ տվյալ դասի միջոցով բացահայտվեց սովորողներից յուրաքանչյուրի ստեղծագործական ներուժը, աշակերտների մոտ ձևավորվեց անգլերենով հաղորդակցվելու կարողություն: Աշակերտները խրախուսվեցին իրենց կատարած աշխատանքին համապատասխան: Դասի ընթացքում նկատված թերությունները շտկվեց հաջորդ դասաժամին: Ինչպես ցանկացած առարկայի, այնպես էլ օտար լեզվի ուսումնասիրության պարագայում սովորողի մեջ գիտելիքի, կարողությունների, հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների ձեռք բերման պահանջ ձևավորելու կարևոր պայման է դրական խթանը: Օտար լեզվի պարագայում նաև երկխոսությունն, որի միջոցով և ընթացքում ձևավորվում է սովորողի աշխարհայացքը: Երկխոսության համար բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընտրել դասավանդման այնպիսի մոտեցումներ, որոնք կխթանեն հոգևոր, մտավոր և բարոյական ինքնուրույնություն ունեցող սովորողի ակտիվ ու անկաշկանդ հաղորդակցումը: Պետք է

կարողանալ ստեղծել միջառարկայակն կապեր,որի շնորհիվ սովորողի մոտ զարգանում է ճանաչողական ակտիվությունը:Ամեն առարկա ունի ուսուցման առանձնահատկություններ: Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները բազմաթիվ են և շատ կարևոր ուսումնառության ճիշտ ընթացքի համար:

1.Լեզուն ծառայում է որպես շփման, շրջապատող իրականության վերաբերյալ տեղեկատվության ընդունման և փոխանցման միջոց: Եվ օտար լեզվի ուսուցումը դպրոցում պետք է դիտել հենց այս տեսանկյունից:

2. Օտար լեզվի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ օտարալեզու երկրի մշակույթին, ընդարձակել մտահորիզոնը, տիրապետել առարկաների, երևույթների, նրանց կապերի և հարաբերությունների մասին մտքեր արտահայտելու միջոցներին: Այդ միջոցներն արտահայտվում են երկու ձևով՝ գրավոր և բանավոր: Սրանք դրվում են օտար լեզվի ուսուցման հաղորդակցական հմտությունների ձևավորման հիմքում:

3. Օտար լեզուն, որպես շփման միջոց, պետք է մշտապես <<փայլեցրած>> պահել, այսինքն՝ միշտ պատրաստ ցանկացած իրավիճակում գործածելու համար: Այդ իսկ պատճառով սովորողի կողմից յուրացված նյութը պետք է մշտապես կիրառվի պրակտիկայում՝ իր բանավոր և գրավոր ձևերով:

Օտար լեզվի ուսուցումը միայն քերականական գիտելիքի հաղորդում չէ: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է օտար լեզվի գործնական իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները, չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում:

Ոչ պակաս կարևոր է դասը վառ, գունագեղ, գրավիչ դարձնելը յուրաքանչյուր սովորողի համար: Դրա համար ուսուցիչը պետք է օգտագործի բոլոր հնարավոր միջոցներն ու հաղորդակցման ձևերը (խաղ, հրահրում, հումոր, խթանում և այլն):

Գլուխ երկրորդ: Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական սկզբունքերը

Օտար լեզվի ուսուցումը իրականացնելիս նախ և առաջ պետք է հետևել օտար լեզվի ուսուցման առանձնահատկություններից բխող հիմնական սկզբունքներին: Դա շատ կարևոր և նշանակալի պայման է հաջողության հասնելու համար: Հիմնական սկզբունքներն են.

- ուսուցումը, դաստիարակությունը պետք է իրականացնել՝ ելնելով հաղորդակցական-ճանաչողական մոտեցումներից,
- ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է ապահովի ուսումնառության դրդապատճառների ապահովումը,
- պետք է կիրառել սովորողին ծանոթ լեզուների լեզվական երևույթների ձևի և բովանդակության բազմապիսի կապեր,
- սովորողների մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը պետք է զուգակցել լեզուների ուսուցման գործընթացում դաստիարակչական խնդիրների իրականացմանը:

Լեզվական նյութը (քերականություն, բառապաշար, հնչյունաբանություն) պետք է լինի պարզեցված և ընտրողաբար, այսինքն՝ անհրաժեշտ է ընտրել քերականական նյութի ամենաանհրաժեշտ և գործածական կառուցվածքները: Քերականական նյութի մատուցումն իրականացվում է հիմնականում խոսքային, նմուշների և կառույցների գործնական կիրառման միջոցով (դերային խաղեր, երկխոսություններ, ՏՀՏ-ների կիրառում և այլն): Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ երրորդ օտար լեզվի ուսուցումը կարելի է կազմակերպել հետևյալ թեմաների շուրջ, ինչպես նաև տալ անհրաժեշտ տեղեկությունների ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, աշխարհագրության, սովորույթների և ավանդույթների մասին: Օտար լեզվի ուսուցման գործընթացում դասավանդողն ու սովորողը իրենց առջև պետք է դնեն մի շարք կարևոր նպատակներ, առանց որոնց դժվար է պատկերացնել ուսումնառության քայլերի հաջորդականությունը և ողջ ընթացքը:

Լեզվի ձեռքբերումը չգիտակցված գործընթաց է, որի հիմքում անգիր արված բառերն ու արտահայտություններն են, լսողական և տեսողական ընկալումը, ինչպես մայրենի լեզվի դեպքում է: Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում:

Լեզուն սովորողը ուսուցումը սկսում է լեզվական կանոնների և բառապաշարի յուրացումից, դրանք դնում գործածության մեջ՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Սակայն, կարծում ենք, լեզվի ձեռքբերումն ու լեզվի սովորումը փոխկապակցված գործընթացներ են: Ուսուցման որոշակի փուլերում կամ ողջ ընթացքում /հաճախ ֆիլմերից, երգերից/ սովորողի հիշողության մեջ պատկերվում և պահպանվում են բառակապակցություններ, արտահայտություններ և լեզվական կառույցներ, որոնք լեզվական կանոններից «դուրս են», չեն համապատասխանում գրական լեզվի քերականական սահմանումներին, սակայն առօրյա խոսակցական լեզվում լայն տարածում ու կենցաղային գործածություն ունեն, ինչի շնորհիվ էլ լեզվագետագործման այսպիսի ձևերը ինքնաբերաբար տեղ են գտնում օտար լեզու սովորողի բառապաշարում և գիտակցության մեջ: Բացի այդ, յուրաքանչյուր սովորող լեզվի յուրացման և գործածման որոշակի փուլում նկատում է, որ իր գիտելիքի որոշակի մասը «մեխանիկորեն» է ձեռք բերել: Դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի : Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում: Անշուշտ, չի կարելի հերքել դարերով եկած այն կարծրատիպը, որ նոր լեզու սովորող յուրաքանչյուր անձ բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման անհատական մոտեցում է պահանջում, ուստի չի կարող մեկ անձի դեպքում հաջողություն արձանագրած մարտավարությունը համարվել բացարձակ արդյունավետ:

Բացի այդ, կարևորվում են նաև լեզվական ուսուցման նպատակը, ժամկետները, սովորողի ընդունակությունները և այլն: Սա է պատճառը, որ մանկավարժության մեջ ուսուցման մարտավարությունները բազմաթիվ են, իսկ արդյունավետ դասավանդման մեթոդները մի քանիսը:

Սովորողի կողմից լեզուն առավել արդյունավետ յուրացնելու ոճով է պայմանավորված մեթոդի ընտրությունը: Ոմանք ավելի լավ են ըմբռնում նյութի հետ

շատ և պարբերաբար աշխատելու դեպքում և նախընտրում են «ուսանողակենտրոն» ոճով աշխատել՝ իրենց վրա վերցնելով նյութի հետ աշխատելու ծանրությունը, ոմանք էլ նյութը հեշտությամբ մտապահում են՝ տեսողական հիշողությամբ «որսավով լեզվական նշաններն ու պատկերները» և դասավանդողից պահանջում են տրամադրել միայն մշակված նյութեր: Ոճերին համարժեք մեթոդ ընտրելիս կարևոր է նաև դասընթացի տեղայնությունը: Եթե ուսուցումը խմբակային, դասարանային կամ լսարանային պայմաններում է, դժվար է պլանավորած նյութին ամբողջությամբ կամ ամենայն մանրամասնությամբ անդրադառնալը, քանի որ յուրաքանչյուր անհատ տարբեր կրթական ունակություններ, հիշողություն և գիտելիքների բազա ունի, բացի այդ պետք է հաշվի առնել նաև նյութի բարդությունը: Մեկից ավելի սովորողների հետ աշխատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում մեկ դասաժամի ընթացքում անցում կատարել տարբեր ոճերի, այսինքն՝ աշխատել տարբեր դասավանդման մեթոդների համակցմամբ: Իսկ ի՞նչ է մեթոդը: Դասավանդողի համար մեթոդը լեզվական նյութի մատուցման և դասավանդման գործընթացի կազմակերպման, իսկ սովորողի համար՝ մատուցված նյութի առավելագույնս արդյունավետ ընկալման, յուրացման և վերարտադրման ձևն է:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում առանցքային կարևորություն ունի ուսուցման ժամանակացույցի մեջ նյութի ճիշտ բաշխումը: Թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը նախապես պետք է համաձայնության գան տվյալ դասընթացից ակնկալվող արդյունքների շուրջ: Դասավանդողը պետք է տեղեկացնի սովորողին, թե տվյալ ժամանակահատվածում, ինչպիսին կարող է լինել այն առավելագույն արդյունքը, որը հնարավոր է գրանցել, և երկուստեք պետք է փոխադարձաբար հետևողական լինեն գիտելիք տալու և ստանալու հարցում:

Օտար լեզվի ուսուցման նպատակներն են.

- հաղորդակցական կարողությունների զարգացում,
- ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու հնարավորությունների իրականացում,
- ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն,

- սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում,
- ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձևավորում:

Օտար լեզվի յուրացման համար ուսուցիչն ու սովորողը պետք է հետևեն ուսումնառության ընթացքում առավել հարմար յուրացման ոճերին և մեթոդներին:

Օտար լեզվի յուրացման ոճը հոգեկան և մտավոր գործողությունների այն ընտրությունն է, որ կատարում է անհատը օտար լեզու սովորելիս: Այն պայմանավորված է անձի հոգետիպով, ընդունակություններով և տրամադրվածությամբ: Լեզվի յուրացման ոճերը սերտորեն կապված են ճանաչողության ոճերի (տեսողական, լսողական ընկալում), անձի հուզականության և ինքնակազմակերպման (ռեֆլեքսիվ, իմպուլսիվ) առանձնահատկությունների հետ:

Սովորողը կամ մասնագետը, կոնկրետ միջոցներ, պայմանների, ժամկետների հաշվառումով լեզվուսուցման անհատակն ծրագիր կազմելիս գիտակցորեն կազմում են լեզվուսուցման ռազմավարությունները: դրանք վեցն են.

- ճանաչողական
- հիշողական
- մետաճանաչողական
- կոմպենսատոր
- հուզական
- հաղորդակցական

Լեզվուսուցման մեջ հնարավոր չէ օգտվել բացառապես մեկ տիպի ռազմավարությունից, քայց հնարավոր է սահմանել դրանց հարաբերակցությունը և որոշել գերակա ռազմավարությունները:

Գլուխ երրորդ: Անգլերենի ուսուցման մեթոդների կիրառությունը և ուսուցման գործընթացի դժվարությունները

Անգլերենի ուսուցման համար շատ կարևոր է ճիշտ և նպատակահարմար յուրացման մեթոդի կիրառությունը: Ամեն մեթոդ ունի իր կիրառության և արդյունավետության աստիճանը:

Կարևոր է նշել քերականական թարգմանության մեթոդը (The Grammar Translation Method): Այս մեթոդը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության պրակտիկան:

Աուդիո-լեզվական մեթոդի (Audio-lingual method) էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

Լեզվի իրավիճակային ուսուցումը (բանավոր մոտեցում) (Situational language teaching oral approach) հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում գործնականում: Այստեղ բանավոր խոքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

Ուղղորդված փորձառություն (Directed practice) դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր սովորելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ուղղակի մեթոդը (The direct method) նախատեսվում է օտար լեզվի ուսուցանումը մայրենիի լեզվի նման, այսինքն ինքը սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է:

Խոսակցական ուսուցումը (Communicative language teaching) նախատեսվում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու,

այն դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները:

Միայն արտասանության, քերականության և բառապաշարին ուշադրություն դարձնելով չես կարող խորությամբ ուսումնասիրել լեզուն: Այդ բանին մեծապես նպաստում են ազգային տոներին նվիրված դասերը` Thanksgiving, Halloween, Christmas:

Օրեր առաջ ես 7-րդ դասարանում աշակերտների հետ կազմակերպեցի դաս-միջոցառում <Halloween >-ի տոնի կապակցությամբ: Դասը կատարեցի օգտագործելով <Thinking Caps> մեթոդը: Դասարանը բաժանվեց խմբերի, նրանց տրվեց հանձնարարություն գրել տեղեկություններ, փաստեր, պատմություններ, բանաստեղծություններ, երգեր տոնի հետ կապված: Դասին պատրաստվելու համար աշակերտները կիրառեցին նաև S2S: Նրանց հանձնարարվեց դասին ներկայացնել իրենց հանձնարարության վերաբերյալ սահիկաշար: Աշակերտները իրենց իսկ հավաքած տեղեկություններով, փաստերով ծանոթացան տոնին, իմացան տոնի իմաստը: Այս ձևով նրանք ծանոթացան անգլիական մշակույթին: Աշխատանքները քննարկվեցին դասարանում: Աշակերտները խրախուսվեցին իրենց կատարած աշխատանքների համար: Աշակերտները մեծ ոգևորությամբ պատրաստվեցին դասին: Ես հասկացա, որ այս տեսակ դասերը նույնպես խթան են հանդիսանում օտար լեզուն և օտար մշակույթը խորապես սովորելու համար:

Ցանկացած գործընթաց ձեռքբերումների և հաջողությունների հետ մեկտեղ առերեսվում է որոշակի դժվարությունների ու խնդիրների հետ: Լեզվուսուցման պրոցեսի ընթացքում ձևավորվել են որոշակի խնդիրներ ևս: Նախ և առաջ` մասնագետը իր առջև խնդիր է դնում զարգացնել սովորողների լեզվական, հանրամշակութային, գործարանական, փոխհատուցման, ուսումնաճանաչողական կարողությունները. բարձրացնել դպրոցից դուրս սովորողի շփման վստահությունը,

- հարստացնել սովորողի օտարլեզվյան բառապաշարը ,
- ձևավորել ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունները,
- զարգացնել ընթերցած նյութը, վերլուծելու կարողությունը,

- զարգացնել սովորողների բանավոր խոսքը՝ կարդացածը ստեղծագործաբար վարարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով, զարգացնել ընդհանուր խոսքային՝ խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման՝ ընթերցանության միջոցով օտար լեզվով նյութը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու հմտությունները:

Եզրակացություն

Եվրոպական խորհրդի կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողովի կողմից մշակվել է լեզուների իմացության/իրազեկության համընդհանուր համակարգ, ըստ որի օտար լեզվի ուսումնառությունը դիտվում է որպես հաղորդակցվելու կարողությունների զարգացմանը միտված կրթական գործընթաց: Այդ իսկ պատճառով ուսուցիչը և սովորողը իրենց առջև դրված ունեն առաջնային նպատակ՝ օտար լեզուն ուսումնասիրել հենց այս տեսանկյունից: Օտար լեզվի ուսուցումը կարևոր քայլ է բազմալեզվության հասնելու ճանապարհին, որը հնարավորություն կտա սովորողին ընդարձակելու շփումների ոլորտը, հաղորդակցվելու հնարավորությունները և կնպաստի սովորողի շփման վստահության բարձրացմանը:

Օտար լեզվի դասավանդումը ՀՀ հանրակրթական դպրոցներում հարաճուն պահանջ է դարձել և համահունչ է միջազգային կրթական պահանջներին:

Լեզվական միջավայրի բացակայության պայմաններում անհրաժեշտ է ուսուցումը կազմակերպել այնպես, որ սովորողները հնարավորինս հաճախակի ներգրավվեն օտար լեզվի ուսումնառության գործընթացին, այդ իսկ պատճառով բավարար ժամանակ է պահանջվում թե՛ լեզվամտածողության ձևավորման, և թե՛ լեզուն որպես հաղորդակցման միջոց կիրառելու համար:

Կարևոր է մի շարք գործնական քայլերի նախաձեռնումը, որոնք կնպաստեն օտար լեզվի՝ որպես սովորողի անձի զարգացման ու դաստիարակության միջոցի, կարգավիճակի բարելավմանը: Մասնավորապես,

- ապահովել օտար լեզվի ուսումնասիրման անհրաժեշտ պայմաններ, ժամաքանակ, խմբերում աշակերտների փոքր թվաքանակ, այլընտրանքային դասագրքեր, մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն
- նախադրյալներ ստեղծել օտար լեզվի հենքային ուսուցման համար, ապահովել սովորողների կրթական պահանջմունքները, հաշվի առնել նրանց նախասիրությունները, հետաքրքրությունները և ապագա մասնագիտացումը,
- շեշտը դնել կրթության վերջնարդյունքի վրա,
- բոլոր օտար լեզուների նկատմամբ իրականացնել միասնական մոտեցում:

Ելնելով այս ամենից ,գալիս ենք այն եզրահանգման որ սովորողի համար օտար լեզուների ուսուցումը ժամանակին համընթաց քայլելու,միջմշակույթային կապեր հաստատելու, բազմալեզու աշխարհում հաստատվելու, կայանալու,ինքնադրսևորվելու միջոց է:

Սովորողի՝ որպես բազմակողմանի զարգացած անհատի ձևավորումը պետք է իրականացնել նրա լեզվական հաղորդակցության կարողության լիարժեք ձևավորման միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Օտար լեզուների բարձրագույն դպրոցում Երևան 2015 <https://bit.ly/3xt9o4L>
11.11.2021
2. Անգլերենի առարկայական ծրագիր 2012թ <https://bit.ly/3r9xy33> 13.11.2021
3. ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օտար լեզուների դասավանդման հայեցակարգ:
<https://bit.ly/3xv1r1s> 15.11.2021
4. Օտար լեզուները Հայաստանում>գիտամեթոդական հանդես
<https://bit.ly/3FQ0QrI> 12.11.2021
5. Ակտիվ , ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, տեխնոլոգիաներ
<https://bit.ly/3p5zCq8> 14.11.2021
6. Օտար լեզվի ուսուցման փուլերը և ոճերը <https://bit.ly/3CU2kPp> 17.11.2021

